

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵՆՔ

Ցանկացած սակավահող երկրում, ինչպիսին է մեր հանրապետությունը, սննդի անվտանգության արդիականության խնդիրը հնարավոր է լուծել միա և գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման միջոցով, այսինքն մշակաբույսերի, մասավորապես պտղատուների և խաղողի արտադրական միևնույն միավոր տարածքից բերքատվության բարձրացման և ցածր ինքնարժեքի հաշվին: Այգեգործության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է արտադրության մեջ կիրառել աճեցման արդիական տեխնոլոգիաներ, ստեղծել կամ ներկրել ու տարածել բերքառատ և բարձրարժեք, վերամշակման պահանջներին բավարարող, պահունակ, փոխադրունակ, տնտեսապես ձեռնատու սորտեր:

Մենք մինչ օրս մշակում ենք սովորական կամ, ընդունված է ասել, դասական այգրներ, ուր աճեցնում ենք բարձրաբուն խոշոր ծառեր՝ 7-8, այն էլ 15 մետր բարձրության, որոնք պետք է տնկվեն շատ լայն՝ 6x4մ, նույնիսկ. 8x8մ բանաձևով և այգում ծառերի թիվը կազմում 200-400 հատ մեկ հեկտարի վրա:



Մեր այգիների ծառերը ավանդաբար պատվաստվում են սերմնաբույս պատվաստակալների վրա: Հիմնականում դրանք խոշոր ծառեր են, բայց քանի որ սեննային բազմացման դեպքով դրսևորող է խայսաբղետ և տարաորակ /հետերոզեն/ ժառանգականություն, ապա վերջիններիս վրա պատվաստված մշակաբույսերի ծառերը նույնպես լինում են անկանոն և անկայուն:

Այսպիսի այգու ծառերը լինում են ինչպես շատ խոշոր, այնպես էլ միջին չափսերի դիմացկուն կամ թույլ, շատ կամ քիչ բերքատու, շուտ կամ ուշ բերքի անցնող նրանց պտղաբերությունը սկսվում է տնկումից 3-5 կամ նույնիսկ 7-8 տարի հետո, նրանց բերքատվության կայունացումը դանդաղ է՝ տևում ևս 4-6 տարի և հետագայում էլ նրանք տալիս են իրար հետ անհամադրելի և անկանոն բերքատվություն: Բայց նույնիսկ այդպի բերքատվությունը հաճախակի զուգորդվում է պտղաբերման պարբերականության երևույթով, երբ լավ բերք է ստացվում ոչ թե յուրաքանչյուր, այլ 2-3 տարին մեկ:

Այդպիսի ծառերի ներուժը տատանվում է 20-ից մինչև 300 կգ բերքի սահմաններում և բերքատվության առավելագույն միջին չուչանիշը որին կարողանում ենք հասնել դասական այգում կազմում է 20-25 տ/հա :

Այսպիսին են մեր թերությունները, իսկ ինչպիսին՝ են զարգացած երկրների առավելությունները, որոնք առաջացել են նորագույն տեխնոլոգիաների կիրառման և սորտային կազմի ճիշտ ընտրության շնորհիվ:

## **ՊՏԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎԱՑՈՒՄԸ ԹԶՈՒԿԱՅԻՆ ԱՅԳԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ**

Արդեն 20-րդ դարի 50-ականներից, Եվրոպայում ու Հյուսիսային Ամերիկայում, այնուհետ գրեթե բոլոր զարգացած ու զարգացող երկրներում, որպես այգեգործության զարգացման ուղի ընտրել են ոռոգման կաթիլային համակարգով թզուկային ինտենսիվ այգիները, որտեղ օգտագործվում են միայն թզուկային պատվաստակալներ, որոնց վրա պատվաստած ծառերը նույնպես թզուկային են, ցածր՝ 2-3 մ հասակով և փոքր՝ 1-1,5 մ սաղարթով: Պատվաստակալ բույսերը բազմացնում են միայն բուսաճային /վեգետատիվ/ եղանակներով և դրա հաշվին նրանք չեն տալիս ժառանգության շեղումներ, բոլոր դուստր բույսերը լինում են

միատարր /համասեռ, հոմոգեն/, միևնույն որակ նույալես լինում է միատարր ու համահավասար:

